№ 8 ՕԳՈՍՏՈՍ 1895

Ա Գ Բ Ի Ւ Ր

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՄԱԳԻՐ

Ե Ւ

ՅԱՒԵԼՈՒԱԾՈՎ

Դաստիարակների համար

ՏԵՍՆԵՒԵՐԵՔԵՐՅՐԴ ՏԱՐԻ

№ 8

ՕԳՈՍՏՈՍ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ
Типографія И. А. Мартиросіанца. Орбел. ул., домъ № 1—2
1895

Дозволено цензурою. Тифлисъ. 23-го Августа 1895 года.

Անմեղ արհեստակը



ՈՒՄԵԶԵՓԻՆ

Երևևիք՝ որդեակ,
բլուրի ի վեր,
Արեւելքը կարմր-
րում է,
Եւ լռեցին հառա-
չաձիքներ,
Արշալոյսը ծա-
գում է:—

Սեւ ամպերը հալածուեցան,
Պարզեց երկնից կամարը,
Շիչած աստղերը փայլեցան,
Փարատելով խաւարը...

Նայի՛ր այնտեղ, ամպի պատառ
Տատանւում է դէս ու դէն,

Նա փայլում է արիւնավառ,
Օրօրելով հողմերին...

Արիւն, արցունք, ողբ ահաւոր
Շոգիացան այս դաշտից,
Կազմեցին մութ ամպի քեւկոր,
Որ գլորւի ծոցն երկնից...

Այժմ ներկուած նա իր գոյնով
Մանի է գալու սարէ սար,
Այժմ ցօղած արշալուսով
Շառագունեց մեզ համար:

Եւ տես, որպէս արմազ, գոհար
Բարձրանում է արուսեակ,
Լուսաւորել է ծով ու սար;
Պըսակ դրել իր ճակատ...

Եղեւնիք՝ որդեակ, գլուխ ի վեր,
Արեւելքը կարմրում է,
Եւ լռեցին հառաչանքներ,
Արշալոյսը ծագում է...

ԱՐՁԱԿ Գ. ՄԱՏՈՅԵԱՆՑ

ԼԱԻ ՄԻՏՔ

Յակոն, Սաքոն և Կարոն հարևաններ և ընկերներ էին, ծնած մի և նոյն գիւղում: Նրանք, առանց մէկը միւսի, չէին գնում ուսումնարան: Երեկոնամում էին ասրեակների հետ և ուսումնարան գնալուց առաջ հաւաքւում էին մեծ վողոյի վրայ՝ վազում և խաղում էին: Արձակուրդի օրերը նրանք խորհուրդ էին անում և իրաքանչիւրը իր կարծիքն էր յայտնում, թէ հետևեալ օրերը ինչ պիտի անէին:

Երբեմն չդիտնելով ուրիշ զբօսանք՝ անվերջ խաղում էին գնդակի խաղ. .լաւ եղանակին գնում էին անտառը մանդալու, և այնտեղից բերում էին թուչունի բոյները, ծաղիկ փնջեր և լաւ ճիպոտներ:

Թէպետև երեկոյեանները մեր չարաճճիները վերադառնում էին երեսները չանգուստած և վայրենի մորեհուց ներկուած, բայց նրանց աչքերը միշտ ուրախութիւնից վառւում էին: Ընթրիքից յետոյ նրանք ոչինչ չէին ուզում, այլ գնում, քնում էին մինչև առաւօտ՝ առանց արթնանալու, այնքան խաղալուց յոգնած էին լինում:

Վարպետի տօնը մօտեցել էր. ամեն տարի այդ տօնը կատարում էր և Հարևան Սաղեան գիւղում, ուր գտնում է

Սուրբ-Ստեփաննոսի աջը: Այդ տօնի օրը ամեն կողմից շատ ուխտաւորներ բերելով իրանց հետ մատաղներ, գալիս հաւաքւում էին Սաղեանի այդ հին-չակաւոր վանքում և փառաւոր տօն կատարում:

Մի քանի օր առաջ կարելի էր տեսնել մեր երեք բարեկամներին լրարից անբաժան՝ մտածելիս, գնալիս, գալիս: Երբեմն մէկը նրանցից իր կարծիքն էր յայտնում, աչքով, ունքով ձեւեր անելով և անդադար ձեռքերը թափ տալով, միւս երկուսները ձեռները մէջքներին դրած՝ լսում էին նրան:

Վարդավառի տօնի նախորդ օրը վոքրիկ Յակոն առաւօտեան ուրախ վեր կացաւ և վազեց իրա ընկերներին գտնելու: Երբ նա դուռ նրանց, նստելով իրանց շուրջը գտնած կանանչ թումբի վրայ, ասաց.

—Ես գտել եմ մի այնպիսի մէջոց, որով մենք վաղը կարող ենք դնալ տօնը տեսնելու. լաւ ականջ դրէք: Երէկ երեկոյեան իմ Հօրեղբայր Միկիչը եկաւ մեր տունը, ես լսում էի, ինչ որ նա ասում էր: Ինքը և իր ծառան վաղը առաւօտեան պիտի տանեն այդ դիւղը մի սայլ խոտ:

—Շատ լաւ, ասաց անհամբեր Սաքոն, բայց ինչպէս:

—Ա՛յ, կըտեսնես թէ ինչպէս, սպասիր՝ խօսեմ, նկատեց Յակոն, թէ չէ՝ ոչինչ չեմ ասիլ:

—Լաւ, շարունակիր, ասաց Կարոն:

—Պուք լաւ պիտէք, շարունակեց Յակոն, որ ես իմ հօրըս ոչինչ չեմ ասել դրա համար, դիտենալով, որ նա կըմերժէր:

—Մենք էլ չենք խնդրել:

—Ուրեմն՝ եկէք մի ճարպիկութիւն անենք, ահա թէ ինչպէս. վաղը առաւօտեան մենք կըդնանք իմ հօրեղբօր տան շուրջը, քաշաքաշ մանդալով կըսպասենք սայլը բեռնելուն և երբ նա դուս իր սովորութեան կըսկսի նախաճաշիկ անել, այն ժամանակ մենք կըծկլուենք բազը, և սայլի ետևից արագ արագ չանդրը-

տելով վեր կըբարձրանանք, ու կուշխատենք որ խրաքանչիւրս մեզանից մի խոռոչ շինի խոտի մէջ, և որքան կարելի է, լաւ ծածկուի, որ մեզ չըկարողանան տեսնել. այդ ամենից լաւ կըլինի:

—Վայ թէ խեղդուենք, նկատեց Սաքոն:

—Փա՜հ. մենք կըբանանք և մի վոքրիկ անցք շունչ քաշելու համար. այդպիսով Հօրեղբայր Պիկիչը մեզ պիտի տանէ, ասանց իմանալու, որ մենք էլ իր հետ ենք,—աղաղակեց Կարոն,—ա՜յ լաւ միտք...

Ճշմարիտ որ այդ միտքը հնարաւոր էր, որովհետև յաջորդ օրը ամեն բան լաւ անցաւ: Բայց տեղը հասնելուն պէս՝ երեք բալեկամները անդ վիճակի մէջ ընկան —թէ ինչպէս պիտի դուրս գային իրանց թաղնուած տեղից, որ Հօրեղբայր Պիկիչը չընկատէր: Մէկէլ յանկարծ տեսան մէկը մեծ երկժանիքը ձեռքին՝ գալիս է, որ պարպակէ բեռը:

Երեք ահաբեկ դլուխներ, միասին դուրս ցցեցին նրանից նեղողութիւն ինդրելու:

—Տէր Աստուած, աղաղակեց խեղճ մարդը, ըոլորովին այլայլած—այս ինչ եմ տեսնում:

Յետոյ ճանաչելով իր եղբօր որդուն, նա ասաց.

—Ի՞նչպէս. այդ դու ես Յակոյ, և դուք Սաքոյ և Կարոյ, ինչ էք շինում այստեղ, ա՛յ անպիտաններ:

—Իմ բարի Հօրեղբայր, ասաց Յակոն դողդողալով, տանից այդպէս եկանք, շատ ցանկանում էինք տեսնել այս օրւայ տօնը:

—Ա՛յ անպիտաններ, ասաց Հօրեղբայրը,—դուք արժանի էք պատժի, ձեզ յետ պէտք է ուղարկեմ ձեր ծնողների մօտ:

—Օ՜ սիրելի Հօրեղբայր, աղերսեց Յակոն, թող դնանք վանքը,—քիչ մանդանք ուխտաւորների մէջ, մենք խելօք կըլինենք այսուհետև:

—Լա՛ւ, լա՛ւ, մրթմրթաց Միկիչը. ես պրաղ կըդամ որ առաւօտեանից մինչև հիմա ոչինչ չէք կերել. և նա տալով վազ, ասեց. «Առէք, պնացէք խանութը, ձեզ համար առնելու բան առէք կերէք, յետոյ ես ձեզ ժամանակ եմ տալիս մինչև ջրա ժամը ուղտատեղում զբօսնել: Բայց տեսէք, սլիտի նշանակած ժամին այստեղ լինէք:

Մի քանի րոպէից յետոյ մեր երեք վաքըիլների վազում էին վանքի բակումը, քաղաքից և շրջակայ դիւղօրայքից եկած ուխտաւորներին նայելով. նրանք մանկական զարթուրթեամբ լսում էին երգերը, դիտում պարերը, սքանչանում ամեն մի քայլափոխում: Նշանակած ժամին հօրեղբայր Միկիչն մօտ եկան:

Երբ կառքը սկսեց շարժուել դէպի դիւղը, երեք վոքրիկ տղայքը գոհ էին իրանց անսկզբած օրից. սկսեցին խօսել, պատմել՝ ինչ որ տեսել էին: Բայց և այնպէս, որքան նրանք մօտենում էին իրանց դիւղին, այնքան նրանց ուրախութիւնը պակասում էր, և յետոյ այնքան տխրեցին, որ էլ ոչով ոչինչ չէր ասում, որովհետև նրանք նախազգում էին որ վերադարձին լաւ պատիժ սլիտի ստանան:

Եւ իրաւ, նրանք պատժուեցին իրանց դլխաւ փախուստի համար:

Ֆրանս. փոխագր. ՕՐԻՈՐԴ ՍԵՄԱԼ



ՍՏՐՈՒԿՆԵՐ

XXI

Ցէսօր էր։

Սևերի երկրի սահմանագլխի մօտ մի արևնագոյն մրջևն շատ քայլերով անընդհատ առաջ էր վազում։ Նա սևերի երկրից գնում էր իրանց պետութիւնը։ Թէպէտ օրը շատ տաք էր, արևի ջերմ ճառագայթներից կարմրատ գետինը լուսում էր արևնագոյնի ոտները, սակայն նա առանց կանգ առնելու մի րոպէ անդամ առաջ էր վազում։ Նա ոտէպ լետ էր նայում և կրկին ճանապարհը շարունակում։ Նա սահմանագլխից հազիւ անցել էր մի քանի քայլ, երբ մօտակայ քարի տակից որոտաց մի ահռելի ձայն.

—Կանգնիր, աւազակ...

Խեղճ ծնկները թուլացան։ Այդ լոպէին շրջապատեցին նրան մի խումբ շէկեր։

—Տղերք, ջարդեցէք, Զիլոնի մարդկանցից է։

Ամենքը յարձակեցին սրտապատառ արևնագոյնի վրայ և տուր, որ կըտաս։

—Եղբայր, ինչ էք ուզում ինձանից, ով է Զիլոնը... չեմ ճանաչում, վայ, թողէք... խղճացէք... գոչում էր արևնագոյնը։

Զիլոնը մի հարուստ, անառանի և մրջևնատէր արևնագոյն էր, որ գաղտնի կերպով մտել էր սևերի երկիրը շէկերի բարբարոսութիւնները մերկացնելու և հատաքաջ ապստոյցները ուղարկելու իր հայրենիքը։ Զիլոն էր կոչւում, որովհետև նա շատ զիլ ձայն ունէր, այնպէս որ երբեմն ինքը անձամբ բարձրանում էր բլրակի գլուխը և բարձր ու զիլ ձայնով հաղորդում հեռուից իր հայրենակիցներին շէկերի չարագործութեան վատութիւնը։ Եւ որովհետև շէկերը լսացել էին նրա ով լինելը և

սկսել էին նրան հետամուտ լինել, որ կալանաւորեն կամ սպանեն, այդ պատճառով էլ նա ծպտեալ կերպով էր շրջում։ Երբեմն նա ոտիպատառ է եղել դանազան խուլ տեղերում թփերի տակ, խոտերի մէջ, բարձր ծառերի կատարներին ամբողջ օրեր-օրով մնալ-թաք կացած, որ չընկնի թշնամու ձեռքը։ Այսպէսի դէպքերում Զիլոնը, չկարողանալով ինքն անձամբ բարձրանալ բլրակի վրայ և դնել իր ձայնը, ուզարկում էր իր մարդկանցից մէկին։

Արևնագոյնը, որին ծեծում էին կատաղի շէկերը, Զիլոնի մարդկանցից էր, և ուզարկած էր արևնագոյնների պետութիւնը հաղորդելու նոր հաւաքած վաստերն ու տեղեկութիւնները։

—Ջնւտ, ասա, ո՞ր չհանդամանն է քո պատուական Զիլոնը... անդադար կրկնում էին շէկերը։

—Չեմ լսանում, չեմ ճանաչում, վա՛յ...

—Դէ ասում ես, ասա, թէ չէ կըսպանենք քեզ, սպառնում էին շէկերը։

—Ուզում էք, սպանեցէք, ինչ ուզում էք, արէք... բայց ես չըդիտեմ նրա տեղը։

Արևնագոյնին այնքան ծեծեցին, քաշքշեցին, որ թշւառը ուժասպառ վռնչեաւ գետնին և լռեաւ հանեց։ Շէկերը տեսնելով որ նա այլևս չի կարողանում խօսել, շալակեցին նրան և հեռացան։ Աւերի երկրի բոլոր սահմաններում այսպիսի խըմբեր շատ կային նշանակուած, որոնք միշտ հսկում էին որ ուրիշ տէրութիւններից լուր տանող, բերող չըլինի. մանաւանդ դիտէին, որ պետութիւններից նշանակուած քննիչ յանձնաժողովը իր քննութեան հետևանքները ուղարկում էր իրանց երկիրը։

Շէկերը միշտ հալածում էին լրտեսներին և ամեն ջանք ղոյծ դնում ծածկելու պետութիւնների առաջ իրանց դաւադրութիւնները։ Սկսան պետութիւնների քննիչ յանձնաժողովն էր, որ ազատ էր հալածանքից։ Շէկերը չէին համարձակւում մինչև անգամ ասելու սրանց, թէ աչքիդ վրայ չօնք կայ, որովհետև սրանք բոլորն էլ հզօր մըշնամոցների ներկայացուցիչներ էին։

XXII

Ամպրոպային զեղեցիկ առաւօտ էր։ Գեղաբոյս անտառը պըճնւած բնութեան զարդով՝ ուրախ-ուրախ ժպտում էր կապոյտ երկնքի երեսին։ Մեղմիկ զեփիւռը խաղում էր ատւերախիտ ծառերի միջին և քնքշաբար շոյում նրանց կանաչ տերևները, որ մխացնելով լրանց շշնջիւնը առւակի խոխոջին, կեանք ու հրճւանք էին ափռում շուրջը։ Կայտառ թռչունները ուրախ ճախրելով ու ոստոստելով ճիւղերի միջին՝ կլկլացնում էին քաղցրաձայն երգեր ու կուշտ-կուշտ ծծում հովասուն օդը։ Իսկ սկեզոյն բզեզները զարթ ու կայտառ ճեմում էին գալարագալարդ գետնի թաւուշներում և բնութեան տուրքը վայելում։ Հաստատ ասպին, բարձր կատարը երկինքը տարած, հպարտութեամբ շրջահայում էր վերևից այս բոլորին և հեղնօրէն ժպտում։ Ձքեղ բնութեան հրաշալիքները կարծես նրա համար ոչինչ էին։ Սոսին լուռ էր։ Նա և՛ մտայլ էր և՛ դառը։ Նա տոկուն ու հաստատ մխակ ծառն է ողջ անտառում։ Կարծքը նա դէմ կըռնի վորթորկի առաջ, ինչպէս հսկայ լեառ։ Նա անյաղթող է և անվեհեր բնութեան արհաւիրքների ժամանակ։ Քանի՛, քանի՛ անգամ կատաղած կոհակները իրար զարնւելով ու մռնչալով փշրել, խորտակել են ամբողջ անտառը, ահ ու սարսափը տարածել են չորս դին, բայց անվեհեր ասպին մինչև այժմ կանգուն է, հաստատ։ Մրրիկ, վորթորիկ, որատ ու կայծակ—ոչինչ են ասպիի համար։ Աշխարհիս երեսին ոչ մի բան չի կարող նրան տապալել, ընկճել, մինչև որ որդները չըսողան, կրծեն, մաշեն նրա բունը։ Քանի՛ քանի՛ երկնային երգիչներ սպաստան են դտել նրա հիւրնկալ ճիւղերի վրայ։ Քանի՛ քանի՛ արարածներ են պատսպարւել նրա տաւերաշատ հովանիում։ Քանի՛ քանի՛ դինւորներ օթեւանել, բոյն են դրել նրա արմատների արանքներում։ Եւ բոլորին ասպին խնամել է, մայրական գգւանքով ընդունել իր գոգը։ Հաստատուն էր նա և այն ժամանակ, երբ իր տաւերում պատսպարում էր և մրջիւնների հզօր ու բարգաւաճ տէրութիւնը, երբ նրանք, ազատ բնկերից և այլ արատքին թշնամիներից՝ բոլոր և երջանկութիւն էին վայելում։

Իսկ երբ սևերի տէրութիւնը քայքայւեց և մատնւեց ստըր-

կաթեան, ոսկին իր երկնասլաց ճիւղերի վրայ էր ապաստան տալիս հալածեալներին, որոնք՝ աղբալով իրանց տալոտամ վիճակը՝ աղաղակելով դէպ-ուէպ էին հայցում երկնքից: Իսկ այժմ, պատռպատելով իր մի լայն և թաղնուած տերևի վրայ պետութիւնների ղրկած քննիչ մասնախումբը, խորհրդաւոր լռութիւն է պաշտպանել:

XXIII

Պետութիւնների ներկայացուցիչ մրջիւնները ծառից չառել են իրանց աչքերը ներքև և ուշադրութեամբ դիտում եմ սևերի մրջնանոցը: Ահա քաղաքի մի աւերակ դռնից եկան մի խումբ սևեր և վայնասուն տալով՝ դիմեցին դէպի ոսոխի կողմը:

—Ա՜խ, անուշիկդ մատաղ, բալա ջան... դոչում էին նրանք:

—Ինչմի՞ն են մեղաւոր այդ խեղճերը...

—Ո՞ւր է արդարութիւնը...

—Ի՞նչ պիտի լինի մեր ճարը...

—Ճար ու ճրագ երկու եղբայր ունէի, նրանք էլ դոհ գնացին, ա՜խ...

—Ո՞ւր գնանք, որ՞ին դիմենք...

—Ա՜խ, ա՜խ, ա՜խ...

Պետութիւնների ներկայացուցիչների սիրտ սկսեց կտրատել այդ աղիողորմ բացականչութիւններից: Նրանք շուտով ցած սողացին ծառից և գնացին դիմաւորելու սևերին, որոնք տեսնելով սրանց, իրանց հուսահատութեան ու լացը կրկնապատկեցին: Ներկայացուցիչների հօրց ու մօրից եկաւ, որ Եարամազը ուստ մատնութիւն է տրել մի խումբ սևերի վրայ և սրանց բոլորին էլ շէկերը մի րոպէում կտտրել են: Ներկայացուցիչները հանդստացրին լացող սևերին, և մխիթարեցին նրբանց յայտնելով, որ մօտ ապագայում ազատութեան դրօշը կբձաձանի նախկին վիճակի վրայ: Այդ րոպէին մօտեցան քննիչ մասնախմբին մի քանի բարձրաստիճան շէկեր:

—Մի՛ք հուսահատ, պարոննե՛ր, ասացին նրանք,—դրանց բոլոր ասածների 99 տոկոսը սուտ է... այդ սևերը այնպիսի մրջիւններ են, որ լուն ուզտ կըշինեն:

—Եթէ պրանց առածը ճիշտ է, թող ցոյց տան ոսկոնածների դիակները, ասաց շէկ աստիճանաւորներից մէկը,—եկէք և տեսէք...

Քննիչ մասնախումբը ուղղեց իր քայլերը մըջնանոցի վէպի այն կողմը, ուր կատարւել էր բարբարոսութիւնը: Բայց, ա՛յ արմանք-զարմանք, այդ տեղում կոտորածի ոչ մի նշոյլ չէր նկատւում: Գետինը մաքուր էր և արեան ոչ մի հետք չրկար:

—Այստե՛ղ, այստե՛ղ չնչեցին մեր զաւակներին, մեր եղբայրներին, գոռում էին սևերը,—ո՛ւր են դիակները, գոնեա՛ դիակները տեսէք մեզ, որ մեր ձեռքով հողին յանձնենք...

—Ի՞նչ դիակներ, ինչ էք սարսող-մարսող գուրս տալիս, որտտց զօրքերի ընդհանուր հրամանատարը: Պետութիւնների ներկայացուցիչները գլուխները գաղնութեամբ շարժեցին և հեռացան:

XXIV

Միւս օրը երեկոյեան, երբ քննիչ յանձնաժողովի անդամները մի քարի վրայ նստած խորհուրդ էին անում, հեռւից լուեցաւ ոտերի խշխշոց: Անդամները գուրս հանեցին գլուխը և տեսան, որ մի սև մըջիւն զգուշ քայլերով մօտենում է նրանց քարին:

—Բարի երեկոյ, պարոննե՛ր, ասաց սև մըջիւնը:

—Ասածու բարին, պատասխանեցին անդամները:

—Երևի ինձ չէ՞ք ճանաչում:

—Խոստովանք լինի—ո՛չ, պատասխանեցին անդամները, բայց ձեր ձայնը շատ դիլ է և ծանօթ է երևում:

—Ես Զիլոնն եմ, ասաց կամաց ձայնով սև մըջիւնը՝ մտնելով քարի տակը:

—Պա՛հ, քո տունը շինւի, ասացին ծիծաղելով անդամները, այդ ինչպէ՞ս վոխւել էք, բոլորովին սև մըջիւն էք դարձել:

—Այո՛, ասաց Զիլոնը, մարմինս ներկել են, որ ինձ չճանաչեն, որովհետև ամեն քայլափոխում ինձ հետևում են և աշխատում են բռնել...

—Ի՞նչպէս են ձեր գործերը, պարոն Զիլոն:

—Քանի դնում է, այնքան ուելի է պարզւում դառն ճշմարտութիւնը, պատասխանեց Զիլոնը, դեռ քանի դիշերային խաւարը չի պատել աշխարհիս, դնանք մեր տեղը այս ճանապարհով և ձեզ մի բան ցոյց կըտամ:

Մրջիւնները Զիլոնի առաջնորդութեամբ սկսեցին առաջ ընթանալ իրանց ալանքներով:

—Ի սէր Աստծոյ, կամաց, թէ չէ մեզ կընկատեն, շշնջաց Զիլոնը և թևքովը պէպէ պետութեան ալտերի կողմը: Նա մի մացառուտ թփի տակ կանգ առաւ և խորհրդաւոր պէմքով նայեց քննիչ մանաւանդ անդամների երեսին: Անդամները Զիլոնի հայեացքից ոչինչ չըհասկացան և երկմտութեամբ յառեցին իրանց աչքերը նրա վրայ:

—Նայեցէ՛ք այստեղ, ասաց նա,—տեսնո՞ւմ էք այս գետինը:

—Տեսնում ենք:

—Ոչինչ չէք նկատում այստեղ, հարցրեց Զիլոնը:

Անդամները խորասոյզ աչքով սկսեցին պտտել նրա ցոյց տւած տեղը: Բայց գետինը մաքուր էր և դարպակ. ոչ մի բան չէր նկատւում նրա վրայ:

—Դէ որ այդպէս է, ասաց Զիլոնը, խնդրեմ օգնէք ինձ փորելու այստեղը, հողը փափուկ է և կարճեմ շուտով կըփորենք ընդհանուր այժմ: Անդամների հետաքրքրութեան սահման չըկար: Բոլոր մրջիւնները սկսեցին փորել հողը:

—Սպասէք, սպասէք, այս ինչ է, ասաց անդամներից մէկը, երկու ձնոտներով քարշ տալով հողի միջից մի սև դուռ:

—Օ՜, ողորմելի՜, սև մրջիւնի գլուխ է... Հանգի՜ստ ոսկերացդ, օ, անդթութեան անմեղ զոհ...

Մրջիւնները դարձեալ սկսեցին փորել: Յանկարծ նրանց առաջ բացւեց մի ահագին հոր, լի սպանուած դիակներով, որոնք սլլանդակուած ու յօշոտուած թափթփւել էին միմեանց վրայ: Տեսարանը սոսկալի էր: Բոլոր անդամները մորմնով մի առ առու անցաւ:

—Այժմ ամեն բան պարզւեց, ասաց մրջիւններից մէկը,—նշո՞ւմ էք, պարոննե՛ր, երբ մեզ տարան կոտորածի տեղը, ոչ մի դիակ ու սրեան կաթիլ չըզտանք:

—Այսպիսի հորեր, ասում են, շատ կայ,—խօսքը առաջ տարաւ Ջիլոնը,—բայց մինչև այժմ մէկն ալ չենք յաջողել գտնելու:

—Իսկ դուք ինչպէ՞ս գտաք:

—Վարպետը իր դրծը լաւ գիտէ, պատասխանեց Ջիլոնը, դառն ժպիտով,—այլապէս մի առած ասում է. «Բիզը չես թաղցնել պարկումը»:

ՅԱՐ. ԹՈՒՐԱՆԵԱՆՑ

(կը շարունակուի)

ՏԱՏԻԿԸ.—Ա՜յ, ՉԱՐԱՃԻ ՉՆԻԿ, ԽԵԼՕՒ ԿԱՅ...

ԱՐԱՎ

Մութ ու ժժգոյն, լամը քայլով,
Լայն թևերը բաց արած,
Ամպ՝ գնում ես մի կարօտով
Դէպ հայրենիքն իմ սիրած.

Ուր անխնամ հայ պեղջուկը
Ջաղցից, սովից է մաշւում,
Եւ անդութի լծի տակ՝
Վերջին ոյժերն է կորցնում։

Արնաշաղախ դաւակին
Նա թողել է սուրը դաշտում.
Վերջին շնչով այն սուրը զոհը
Մի կաթիլ ջուր է խընդրում...

Անցիր Սասնոյ սարերը,
Վան ու Ջէյթուն՝ անվրդով,
Հայ պեղջուկի վշտերին
Վկայ եղիր անխրտով։

Սակայն տար, տար քեզի հետ
Իմ արցունքից մի կաթիլ...
Եւ ծարաւած հայ եղբօր
Ըղձունքները դու ցօղիր...

Պ. ՄՈՍԱՓՈՒԵԱՆՑ

ԾԵՐ ԳՈՒԴԸ

Օսական աւանդութիւն Վ.Ս. ՍՈԼՈՎԻԵՎԻ

Ընդարձակ Արագւի ափին, խոր քարանձաւի մէջ, կայ մի օսական տուն: Ամեն կողմից շրջապատում են նրան վիթխարի լեռները, որոնք կարծես իսկոյն ևեթ պէտք է պատահեն միմեանց, կլանեն կամ ջախջախեն խեղճ մարդկանց տնակները:

Սակայն անցնում են դարեր, լեռները մնում են անշարժ և միայն երբեմն լսում է տուլում, թէ ինչպէս նրանց հեռաւոր բարձրութեան վրայ խուլ տրտնջիւններ են բարձրանում: Ծեր Գուդն է նա, որ իր անհաւանելի դագաթի վրայ զարճանում է խորխորատը ձգելով ձիւնի ահագին կոյտերը:

Երբեմն էլ, հէնց որ անցնում է նրա խաղը, պատահում է, որ ձիւնի կոյտերը ձգում է նոյն իսկ մինչև տուլը և ձիւնի տակ է թողնում երկու-երեք տնակ միասին: Այս տեսակ դէպքերում օսերը շատ են աշխատում, որ դէն ձգեն այդ ահագին ձիւնի կոյտը, ազատեն իրանց հարևաններին և չըթոյլ տան նրանց սովամահ լինել ձիւնի տակ:

Բայց և այնպէս այսպիսի կատակները Գուդը այժմ շատ ուշ-ուշ է թոյլ տալիս իրան: Օսերը լաւ գիտեն նրա բնաւորութիւնը, ուստի աշխատում են երբէք չըբարկացնել նրան և չըդարձնել իրանց վրայ նրա ուշադրութիւնը:

Ձմեռն երկար գիշերները, երբ բոլոր ճանապարհները ծածկւած են ձիւնով, սարսափելի խաւար է տիրում ու անկարելի է դլուխն անդամ հանել տնակից, ծերերը սիրում են պատմել, փոքրերին խրատելու նպատակով, ծեր Գուդի սարսքների և այն քաջասիրտների հետ պատահած արկածների մասին, որոնք վստահանում էին վրդովել զօրաւոր ոգուն նրա ձիւնապատ գագաթի վրայ:

Անկարելի է որ մարդս առանց պատժելու տեսնի լեռնային վիթխարուն. թէպէտ նա չար չէ և մօտ չի թողնում, սակայն հանում է ճանապարհից ու խորխորատ ձգում, թողնում է ձիւնի տակ և ոչնչացնում է յանդուգն մարդուն:

Շատ քչերն էին նրանցից առլը կենդանի վերադարձել, որոնք երբեմնապէս հիւր են եղել նրա մօտ: Գրեթէ ամենքը սպանւել են և միայն լեռնային ալծլուները և ինքը ծեր Գուդը գիտեն՝ թէ ո՞ր խորխորատների և առապարների անդունդներում են հանգչում նրանց ոսկրները:

Իսկ նրանք, որոնք վերադարձել են, բոլորովին չարչարւած և կիսակենդան են հասել տուն. դօրաւոր ոդին այս ու այն կողմն է տարել նրանց, ցոյց է տւել իր խաւար թագաւորութեան բոլոր սարսափները, բայց նրա կախարդւած բնակարանը և նոյն իսկ իրան ոչ ոք չէ կարողացել տեսնել:

Սակայն ոչ, նրան տեսաւ Կորտուրոն, բայց ինչ օգուտ դրանից.—հէնց որ նա վերադարձաւ առլը, բառաչում էր, գրկւել էր լեզուից, բանականութիւնից և այն օրից նա թափառում է՝ բոլորովին չընմանւելով մարդու: Եթէ չրկեզակրեն բարի մարդիկ, Կորտուրոն կրմեռնի սովից, որովհետև ինքը չի հասկանայ, որ պէտք է մի բան ուտել: Իսկ հէնց որ նայում Գուդ լեռան վրայ՝ բոլոր մարմնով դողում է, բառաչում է, բլբլում է վրփոտը բերանին, աչքերը սարսափեցնում են մարդու և յանկարծ փախչում է, ինքն էլ չիմանալով թէ ուր, և միայն կանգ է առնում, երբ պատահում է մի տնակի կամ ծառի:

Սակայն որքան էլ մեծ է ծեր Գուդի դօրութիւնը, այնուամենայնիւ նա էլ, շրջապատւած իր լեռնային թագաւորութեան հրաշքներով, ինչպէս երևում է, ամեն մի խեղճ մարդու նման վիշտ ու թշւառութիւն ունի:

Մի անգամ նրան էլ մեծ չարիք պատահեցաւ, որի մասին ծերունի օսերը շատ են սիրում պատմել հետաքրքրութեամբ և ագահութեամբ լսող իրանց երիտասարդներին:

* * *

Այս անցքը, երևակայեցէք ձեզ, վաղուց, շատ վաղուց է պատահել: Աւլում ամենաճայրի տնակներից մէկի մէջ

քնակւում էր վերջին ծայր աղքատութեան հասած մարդ ու կնոջից բաղկացած մի ընտանիք: Պրանք դեռ երիտասարդ և աշխատող մարդիկ էին, բայց որքան էլ աշխատում էին, այնուամենայնիւ հազիւ էին կարողանում հայթայթել իրանց օրական ապրուստը: Նրանք չունէին ուրախութիւն և ահա, ինչպէս երևում է, Աստած խղճում է պրանց և ուղարկում է իրանց աղքատութեան պատճառով մի միլիոնատիրուհի,—ծնւում է նրանցից մի աղջիկ: Անուանում են նրան Նինօ. այդպիսի գեղեցկուհի ոչ պրա ծնւելուց առաջ և ոչ յետոյ չէ լոյս ընկնում ամբողջ Օսատանում: Ուրախ և առոյջ աճում էր աղջիկը, օրէցօր աւելի և՛ աւելի գեղեցկանալով: Ամենքը, ովքեր նայում էին, չէին կարողանում աչքը հեռացնել նրանից:

Երբեմն, պատահում էր որ փոքրիկ Նինօն դուրս էր վազում պէպի ճանապարհը, պատահում էր հեռաւոր լեռնացի՝ճանապարհորդի կամ մի որ և է սուլհանդակի, կանգնում նայում էր նրա վրայ և հրճւում, ինչպէս մի կախարդած, մինչև անգամ աչքերից արտասուք էր գալիս: Ամենախստասիրտ և չար մարդը երկնային այդ հրաշալիքի վրայ նայելիս՝ և ուրախանում էր և տխրում: Սիրտը ակամայ բաբախում էր և լիշում կեանքի ամենաբարի, լաւագոյն ու ամենաքաղցր րոպէները: Չէ որ ամեն մարդ, ով կուզէ լինելը և ինչպէս որ կուզէ լինելը, ունեցել է իր կեանքում գոնէ մէկ այդպիսի րոպէ:

«Աստած օրհնէ քեզ, ով հրաշալի մանուկ», շշնջում էր ճանապարհորդը և Նինօյին մի ընծայ էր տալիս:

Իսկ Նինօն նայում էր, ժպտում, լջեցնում էր դլուխը, ընծան վերցնում և իսկոյն վազում իր ծնողների մօտ:

Եւ քիչ-քիչ Նինօյի գեղեցկութեան շնորհիւ անշուք տնակի մէջ երևում է և առաջինը և երկրորդը և երրորդը—ձեռք են բերում մի փոքր կարողութիւն: Ահա տեսար նրա հայրը գնեց իր համար տասը ոչխար:

* * *

Անցնում է բաւական ժամանակ, Նինօն աւելի ևս գեղեցկանում է: Ամրանում են նրա արագընթաց ոտքերը և գար-

Նանը, երբ լեռների ձիւները հալւում են և աղմկալի առուներ դառնալով՝ վազում են և ժայռերի մէջ ճաղկում են արօտատեղերը, նա տանում է հայրական ոչխարներն արածեցնելու։ Փոքր այծեամի նման նա մագլցում է քարերի վրայով և յաճախ բարձրանում է սարահովիտի որևէ մի դառնավայրի վրայ։

Սակայն չէ վախենում փոքրիկ դեղեցկուհին։ Նա ազատ է և ուրախ։ Նրա հրաշալի աչքերն առելի են բացւում հիացմունքից, նայում են շրջապատող հզօր բնութեան վրայ։ Մանկական կուրծքը առելի խորն է շնչում լեռնային օդը։ Եւ ահա նա իր բարակ ու քաջահնչիւն ձայնով ստեղծում է օսական երգի առաջին ձայնանիշները...

Լսեց մի անգամ Ծեր Գուլը իր հեռաւոր դաղաթից այդ արծաթափայլ ձայնանիշները։ Ականջ դրեց։ Ի՞նչ բան էր դա։ Երդեօք մի նոր կենաւտու ջրի մաքուր աղբիւր է վազում քարերի միջով, այնտեղ ներքևում, և խոխոջում է քարերից անցնելով։

Ո՛չ, նա ջրի ձայն չէ։

Երդեօք սոխակն է, որ վհատելով դարնան բախտից և տանջանքից, կանչում է իր ընկերուհուն։ Ո՛չ, նա սոխակը չէ։ Կարծէք մարդկային ձայն լինի։

«Բայց միթէ մարդիկ կարող են այդպէս երգել», մտածում էր Ծեր Գուլը։

Յրւելով իրանից սմսկերը, իջեցրեց իր ալեզարդ գլուխը, նայեց հեռւոտես աչքերով այնտեղ, ներքև, իր թոռւատրութեան հեռաւոր սահմանները, որտեղից լսում էին տարօրինակ ձայներ։ Եւ նկատեց նա ժայռի վրայ՝ մի տոկալակ տեղ փոքրիկ Նինօյին։

Յենւեցաւ նա իր զօրեղ թևերով ահագին քարերին և այդպէս էլ մնաց, անընդհատ նայելով։ Յանկարծ արտասուք վազեց նրա այտերի վրայ, վազեց նրա սպիտակ մօրուսի դալարաճներից և ընկնելով քարերի վրայ, առւակի նման սահեց նոյն իսկ մինչև լեռան ստորոտը։

Եւ մարդիկ առում էին.

«Գարնանային արեգակի տաք ճառագայթներն են, որ հալեցրել են սառոյցը նոյն իսկ դաղաթի վրայ»։

Արեւակի ճառագայթները Նինոյի զգեցկութիւնն էր, իսկ լեռնային առուոյը—ծեր Գուղի սիրտը, որ առաջին անգամ տաքացել էր դեռ երբէք չըլսած զգացմունքից:

***

Հէնց այն րոպէից Հզօր Գուղը այնպէս սիրեց վոքրիկ Նինոյին, որ մխիթարն նրա մասին էր մտածում և մխիթարն նրա մասին Հոգում: Հետևել նրան առաւօտից մինչև երեկոյ, մի քայլ անգամ մենակ չըթողնել՝ դարձել էր այժմ նրա սովորական զբաղմունքը: Եւ այդ զբաղմունքը այնպէս վոգեորել էր նրա կեանքի եղանակը և այնքան նորնոր ուրախութիւններ էր պատճառել նրան...

Հէնց որ Նինոն դուրս կըզայ լեռները դնալու և կըցանկանայ բարձրանալ մինչև գագաթնակէտը, որ տանում է Հոգիս նկատելի մի վտանգաւոր ճանապարհ, մի ակնթարթում այդ ճանապարհը ուղղւում է Նինոյի առերի ասկ և նա առաջ է դնում, կարծէք յառակի վրայ:

«Ահա ուղղուեիդ մի ժայռ խոչընդում է նրա ճանապարհը: Բայց մի ակնթարթ՝ և քարերը իրանց-իրանց դառնում են մի յարմար սանդուղք: Եւ այդ սանդուղքով պիւրութեամբ ու ապատ, կարծէք մէկի օգնութեամբ, բարձրանում է ժայռի վրայ, որտեղից նրա առաջ բացւում են ամենագեղեցիկ տեսարանները:

Փախչում է նա կանաչ մարգագետինների միջից, կարծէք սրընչի օգնութեամբ, Հոգիս ղիւզում են թարմ խոտին նրա վոքրիկ առերը: Իսկ եթէ վազելու ժամանակ նա իրանից երկու քայլ հեռաւորութեամբ տեսնէ մի խորխորատ և ղուայ, որ այլ ևս այժ չունի կանգ առնելու և պատրաստ ստրատիից աղաղակելու—մի ակնթարթ՝ և խորխորատը մնում է միւս կողմը: Իսկ ինչպէս անցաւ, ոչ տեղափոխեց նրան—նա չըդիտէ և միայն ուրախ ու ազատ է: Ըրջակայ ժայռերը կրկնում են նրա մանկական ուրախ ժպիտը, նրա քաջահնչիւն երգի ձայները:

Ուրախանում է ու հրճուում է ծեր Գուղը, նայելով նրա վրայ և շշնջում է նրա ականջին քնքոյշ լուսքեր: Բայց Նի-

նօն չի լսում նրանց: Նա կարծում է միայն, որ փչում է իր շուրջը լեռնային թեթև քամին և հաւաքում է ու կարդի է ձգում սևագոյն մազերի մետաքսանման ծամերը, որ ընկած են նրա գեղեցիկ դէմքի շուրջը:

Դուրս կրգայ թէ չէ Նինօն իր փոքրիկ ընկերուհիների հետ ծաղիկներ ու խոտ հաւաքելու, Դուդը արդէն այնտեղ է: Անտեսանելի ձեռքերով քաղում է ամենահրաշալի, ամենահոտաւէտ ծաղիկները, կալդի է բերում նրանց, կապում է նրանցից զանազան գեղեցիկ փնջեր և դնում է նրանց քարերի տակ: Պօտենում է Նինօն թէ չէ՝ թափւում են նրա առաջ քարերը և հոտաւէտ ծաղիկները՝ և իրանք են անցնում նրա ձեռքը:

Ոչխարների փոքրիկ հօսը, որ պատկանում էր նրա հօրը, ազատ ամենայն դիպւածից, կարող էր արածել ուր որ ուզէր առանց հսկելու: Երբէք ոչ մի ոչխար չէ ընկել գառիվայրի մէջ, երբէք մի գայլ չէր համարձակւել մօտենալու Դուդի հսկողութեան տակ գտնւած հօտին:

Ծեր Դուդը ոչ միայն ցերեկով, այլև դիշերով չէր վստահանում թողնել իր սիրելիին: Հաւսկան վազվզելուց և լեռնային օդը ծծելուց յետոյ, փոքրիկ Նինօն քնում էր, իսկ զօրեղ ոտին, թեքւելով նրա գլխի կողմը, շշնջում էր նրա ականջին հրաշալի հէքիաթներ և քաղցր երազներ: Եւ երազում է նա միշտ այնպիսի բաներ, որոնց ինքը չէր էլ կարող հասկանալ: Նա երազում է ստորերկրեայ թագաւորութեան հրաշալիքների մասին: Փայլում են նրա առաջ գոյնզգոյն քարերի կոյտերը, վառում են ոսկեայ և արծաթեայ գետեր և շշնջում ու կարկաչում են աղբիւրները...

Եւ յանկարծ ամեն ինչ հանդստանում է և լսում է ինչ որ մի փաղաքշական ձայն, և նկատում է միայն, վրայ հասնող ամպի մէջ, քնքոյշ, փաղաքշական մի հայեացք դէպի նա ղարձրած: Կարծէք կանչում է և դրատում, կարծէք մի բան խոստանում է անյայտ երջանկութիւնը...

Եւ քաղցր քնած է Նինօն այդ երազների մէջ: Իսկ արթնանում է թէ չէ, փարթամ, ուրախ դուրս է վազում տնակից ու ամբողջ արարած աշխարհը, պարզ երկինքը, տաք արեգակը և

և ահագին լեռները կարծէք ուղարկում են նրան իրանց ողջոյնը և կարծէք հնչում են նրան. «Ողջո՛յն, գեղեցկուհի Նինո»:

Եւ այս ողջոյնի ժամանակ դարձեալ լսւում է մի տեսակ ձայն, որ նման չէ ոչ քամու, ոչ էլ որ և է մի նոր ու արդէն ծանօթ ձայնի:

«Նինո, ես քեզ սիրում եմ»:

Կ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ

(Կըշարունակւի)

ԱՐԾԻՒՆԵՐԸ ՈՐՍՈՒՄ ԵՆ ՆԱՊԱՍՏԱԿ

ԴԱՀՃՏԱՅԻՆ ԵՒ ՋԵՐՄԱՆՈՑԻ ԾԱՂԻԿ

Մանկավարժական վէպ ԲԻՉԷՐ-ՍՏՕՈՒՒ

X

Հարկէ, նրա մօր ոյժերն հետզհետէ պակասում էին, բայց դարձեալ Մարթան կարող էր Հանդիստ լինել, քանի որ իր բարի աղջիկը մօտն էր: Լաստենու տասնվեց տարին լրացել էր: Նա տան Հոգին էր:

Էմիլիա Պրաուդի տասնվեց տարին նոյնպէս լրացաւ: Անբոզջ Նիւ-Եորքում օրիորդներից շատ քչերը կարող էին մրցել նրա Հետ, շքեղութեամբ և վայելչակազմութեամբ: Նրա մի խօսքը, մի շարժումն իր շրջապատողների համար պատուիրան էր, որոնք նայելով նրա վրայ զւարճանում էին: Բայց և այնպէս խնայելի և անբախտ արարած էր Էմիլիան: Նա օրէցօր նիհարանում և դեղնում էր: Եթէ նա սանդուղքով վերև էր բարձրանում, նրա սիրտն այնպէս էր բաբախում և այնպէս իրան վատ էր զգում, որ բոլորին վախեցնում էր և ինքն էլ վախենում: Նա երբեմն այնպէս տխուր տրամադրութեան մէջ էր լինում, որ ամբողջ ժամերով սկսում էր լաց լինել և սաստիկ վհատել:

Մայրը, մօրաքոյրերը և ուրիշ աղդականներն անհանդիստ

էին լինում և նրանց խօսակցութեան առարկան Էմիլիայի առողջութիւնն էր:

—Նա շատ զգայուն է—ասաց նրա մայրը—նա այս աշխարհի համար չէ ստեղծւած. ամեն բան նրա վրայ ազդում է ազդում:

—Պատարիկ, ունայն բաներ են, տիկին,—պատասխանեց ալեւոր բժիշկ Չարտհակը, երբ Էմիլիայի մայրն արտասուալից աչքերով պատմում էր իր աղջկայ զգայնութեան մասին:

Պէտք է ի նկատի ունենալ, որ բժիշկ Չարտհակը այն բժիշկներից տասնեւիններորդ էր, որոնք հրաւիրւած էին Էմիլիային բժշկելու համար: Վերջի ժամանակները շատերը բժշկում էին Չարտհակի մօտ, որովհետեւ նրա հասարակ և իսկոյն խօսքերը բոլորովին հակառակ էին մեւս քաղաքավարի բժիշկների ասածներին: Եւ հաստատում էին թէ նա դերբնական բժիշկ է, ապա թէ ոչ էր համարձակւիլ այդպէս կոպիտ վարւել իր հիւանդների հետ:

Բժիշկ Չարտհակը Էմիլիային ոտից մինչեւ գլուխ քննեց:

—Չ'ը—ասաց նա—մառանում ծաղկած դետնախնձորի աղնիւ, նորաբողբոջ երակներում ոչ մի կաթիլ կարմիր արիւն չկայ:

—Ի՞նչ տարօրինակ լեզու է—շշնջաց տատը,—բայց ամենի հետ նա այսպէս է խօսում:

—Գողտրիկ մայրիկ—ասաց բժիշկը պատնաղով Էմիլիայի մօրը—չի կարելի մեծացնել աղջկան կերակրելով նրան կոնֆիկտներով և զանազան քաղցրաւենիներով: Պէտք այդ փորձառութեամբ լմացաք, և հիմա յուսահատւում էք, որովհետեւ ձեր աղջկայ երակների մէջ արիւնի մի կաթիլ չկայ և նա սանդուղքով բարձրանալով՝ շնչասպառ է լինում: Պահեցէք նրան աւելի հասարակ, գողտրիկ մայր, ուղարկեցէք նրան բժշկելու, երեւելի բնութեան—բժշկի մօտ: Ընդհատեցէք խնջոյքները, հանդէսները, դաշնամուրի վրայ ածելը, թողեցէք կօրսէները, որոնք սեղմում են թոքերը, և ուղարկեցէք ձեր աղջկան հասարակ և սիրելի դաստակերտում ապրելու: Թող նա այնտեղ սովորէ՝ ոտաբոբիկ մանդալ ցօղերում, խմի տաք կաթ, բարձրանայ խուրձերի վրայ, գլորւի խոտերի վրայ և դաշտերում թափառի: Վստահ եմ, որ դուք այն ժամանակ ձեր աղջկան չէք ճանաչիլ,—դեղերը նրան ոչ մի օգուտ չեն տալ: Պէտք նրա ստամոքսը կըզարձնէք դեղարան, բայց դրանից առողջութիւնը կըվատթարանայ: Կրկնում եմ, որ նրա արիւնի մէջ այնքան երկաթ չի գտնւիլ, որ կարելի լինէր նրանից ասեղ շինել:

— Ե՛րևաթ, նրա արիւնի մէջ,— կրկնեց մայրը.— մի՛թէ այդ լաւ բան է:

— Այո՛, երևաթ, արիւնի կամ կարմիր գնդակներ, կամ ուրիշ ինչ կերպ կամենում էք, այնպէս անուանեցէք: Նրա արիւնը բաղկացած է միայն ջրից և աւիշից, այդ պատճառով էլ նրա այտերը, շրթունքները,— բաւիստի թաշկինակի գոյնի նման են: Սիրտն առողջ է և կրզորձէ ինչպէս հարկն է, եթէ արիւն լինէր: Ձեր աղջկան պէտք է արիւն և ընութիւնը կը տայ նրան այդ արիւնը:

— Մենք, պ. բժիշկ, մտադիր էինք գնալ Նիւպորտ:

— Ա՛հ, Նիւպորտ, որ ամենայն գիշեր գնաք պարահանդէսներ և խնջոյքներ: Ոչ: Ուղարկեցէք նրան հին, առանձնացած դաստակերտ, որտեղ չըկան արուեստական զարճութիւններ: Թող նա սովորէ դանազանել թթի ծառից վարդը, թող սովորէ գետնախնձոր ցանել և բահով երկիրը փորել:

Մայրը, տատը և մօրաքոյրերը այն եզրակացութեան եկան, թէ բժիշկ Հարահակն այլանդակ մարդ է, բայց նրան պէտք էր անշուշտ հնազանդել: Եւ նրանք սկսեցին իսկոյն փնտրել այնպիսի դաստակերտ, որպիսին ցանկանում էր բժիշկը: Ջալամանալի բան, Իմիլիայի ազգականները հաւանեցին Պրեմրոզի դաստակերտը: Այսպիսով երկու ջահիլ օրիորդներ, տանուեց տարաւ ընթացքում դաստիարակելով զանազան պայմաններում՝ հիմա պէտք է մի տան մէջ ապրէին:

Ձքեղ կառքը կանգնեց դռան առաջ. շատ զարմացան բնակիչները, երբ դուրս եկան կառքի միջից մի տիկին իր ամուսնու հետ և հարցրին՝ արդեօք չէ՞ կարելի վարձել ամառայ համար բնակարան:

— Ձշմարիտ տատ,— պատասխանեց Պարթան,— մենք երբէք դրա մասին չենք մտածել: Ես մինչև մարդուս հետ չը խօսեմ, չեմ կարող ձեզ հաստատ խօսք տալ:

— Իմ աղջիկս սաստիկ տկար է,— շարունակեց տիկինը,— բժիշկը հրամայել է նրան գիւղում ապրել:

— Վախենում եմ, որ նա այստեղ ձանձրանայ,— ասաց Պարթան.— մեզ մօտ նրա համար ոչինչ հետաքրքրական բան չըկայ:

— Չէ՛նց մեղ էլ այդ է պէտք,— խօսքը կտրեց տիկինը,— իմ աղջկայ ջղերը սաստիկ գրգռուած են: Նրան հարկաւոր է հանգստութիւն և խաղաղ կեանք:

— Ի՞նչով է տկար ձեր աղջիկը:

— Ամեն բան սաստիկ տպաւորւում է նրա մէջ և շատ

քնքոյշ է։ Եթէ մի վտքը յոգնում է, ուշաթափ է լինում։

—Եթէ այդպէս է, մենք հապաղել թէ կարողանանք օգուտ տալ նրան,—ասաց Մարթան։ Մենք ծառայ էլ չունենք։

—Ուրախութեամբ մենք կըվարձատրենք,—շտապեց յայտնել Էմիլիայի մայրը,—և ոչինչ չենք խնայիլ։

—Թող գայ—շշնջաց Լաստենին, մտնելով խոհանոց և կանգնելով մօր ետևում,—ես կաւաղջացնեմ նրան։ Ես նրան կըճաւայեմ, ես բնաւ չեմ յոգնում։

—Ձեր աղջիկն ինչպիսի առողջ կազմուածք ունի,—ասաց Էմիլիայի մայրը, զարմացած նայելով Լաստենու վրայ։

—Եթէ աղջիկս համաձայն է, թող այդպէս լինի, կըվորձենք,—ասաց Մարթան,—ամեն բան նրա համաձայնութեամբ է կատարւում մեր տանը, ամեն բանի վրայ նա է հոգս տանում։

Վճռեցաւ որ միւս շաբաթ Էմիլիան գայ։

XI

Վճռեցին Էմիլիային տանել դաստակերտը, բայց նախ քան տանելը՝ զարձեալ կամենում էին բժշկի հետ խորհրդակցել։

—Ի՞նչ շորեր նրան հագցնել,—հարցրեց մայրը—լեռնայինն օրը սառն է, պէտք է տաք հանդերձ կարել։

—Ես կըհոգամ այդ մասին,—ասաց Մարիամ մօրաքոյրը։

—Չանգի՛ ստ,—ասաց բժիշկը—տեսնենք օրիորդն ինչ դրութեան մէջ է։

Եւ այս խօսքերով, նա մատը կամենում էր Էմիլիայի զօտիի տակ մտցնել։

—Ո՛հ,—բացականչեց նա.—ես այսպէս էլ կարծում էի։ Մի՛թէ կարելի է շունչ քաշել, երբ կուրծքն այդպէս սաստիկ սեղմած է։

—Հաւատացնում եմ ձեզ, բժիշկ, որ Էմիլիան երբէք չի սեղմում,—ասաց մայրը։

—Ոչ, ես կուրծքս չեմ սեղմում,—շշնջաց Էմիլիան.—և իմ հանդերձը շատ ազատ է։

—Բոլոր կանայք այդպէս են ասում,—պատասխանեց բժիշկը.—այն բոլոր անյարմարութիւնները, որ նրանք քաջութեամբ են տանում, ինձ ստիպում են բոլորովին նրանց խօսքին չըլսել։ Օրինակ վերցրէք մի երիտասարդի և նրան այնպէս սեղմեցէք, ինչպէս սեղմած է Էմիլիան և հարցրէք՝ կարո՞ղ է նա ազատ շունչ քաշել։ Հաւատացնում եմ ձեզ, որ կոմի պէս

կըբառանչէ: Բայց ելէ ասէք օրիորդին, որ մոդան պահանջում է նեղ լրան ունենալ, դուք նրան այնքան կըսեղմէք, մինչև որ նա շնչասպառ կըլլինի: Եւ մինչև անգամ մեռնելուս էլ նա կասկածէ ազատ է շնչում: Այդ պատճառով ես ձեզ չեմ հաւատում: Պէտք է թողնել կորսէները և նեղ զօտիները, ու մէկ ամբողջ տարի պէտք է հագնել լայն շորեր: Ձեր թոքերը պէտք է ազատ շնչեն լեռնային մաքուր օդը:

—Պ. բժիշկ. ես չեմ կարող առանց կորսէի ուղիղ մանզալ: Երբ հանում եմ կորսէն, ինձ վատ եմ զգում: Ինձ անհրաժեշտ է կորսէն:

—Հասկանում եմ, դուք այնքան սեղմել էք ձեր մկանները,—որոնք պահում են ձեր մարմինը,—որ բոլորովին թուլացել են և չեն կարողանում ուղիղ պահել մարմինը: Մկանները սնունդ և ոյժ են առնում, աստիճանաբար հոսող արիւնից: Ըրեան շարժումը դադարեցրէք և մկանները կըթուլանան: Նայեցէք,—շարունակեց բժիշկը՝ ցոյց տալով վէներայի արձանը, որ ղրած էր բոխսրը վրայ.—տեսէք ինչպէս լայն իրան է և ուժեղ են կողքերի մկանները, որոնք շարժում են շընչառական գործարանը: Արդեօք կըմտածէ՞ք որ այսպիսի մի կինը սանդուղքով բարձրանալով ուժասպառ կինի: Այսպէս էր նախնի յունաց դիցուհու իդէալը: Ազատ շնչառութիւնը ա ս ք ա ց ն ու մ է մարմինը և կենդանացնում է արիւնը: Միայն այս պատմանելով կարելի է առողջ լինել և ունենալ լաւ տրամադրութիւն: Իմիլիայի լանջերի տակ բնութիւնն աշխատում է արիւնը մաքրել, շարժել, որ հարկաւոր է նրա ձեռքի, ոտքերի, ստամոքսի և ուղեղի առողջութեան համար,—բայց արդեօք դրա համար կայ բաւական տեղ:

Իսկապէս կոզմտածքն այնպէս սեղմտած է, որ շատ քիչ արիւն է շրջեցնում, այդ պատճառով էլ Իմիլիայի շրթունքները սպիտակ են, ինչպէս թաշկինակ, իսկ աչքերը դունատ. սիրտը բաբախում է, դլուխը ցաւում, ստամոքսը վատ է մարսում կեբակուրը և պատահում են դանադան տկարութիւններ, որոնք տանջում են փոքր արիւն ունեցող մարդկանց: Ահա—բացականչեց բժիշկը, վերցնելով սպունդը լացարանի վրայից.—ձեր թոքերը նման են այս սպունդին և ամեն մի շնչառութեան ժամանակ, նրանք պէտք է լայնանան և ներս ընդունեն շատ օդ: Այս օդը մաքրում, կենդանացնում է արիւնը և նրան դարձնում է պիտանի մարմին սնունդ տալու համար: Չիմա նայեցէք թէ կորսէն ինչ է անում ձեր թոքերին.—շարունակեց բժիշկը, սեղմելով ձեռքում սպունդը.—շնչառական թոքերը,

այն աստիճան սեղմւում են, որ օդը հազիւ է կարողանում անցնել նրա միջով: Ինքներդ դատեցէք սրանից յետոյ, ինչպիսի արիւն կարող է լինել:

—Դուք այնպէս էք կարծում, բժիշկ—ասաց Էմիլիան—թէ ես կառողջանամ, եթէ միայն կէս տարի ձեր խորհրդի համեմատ հաղնեմ:

—Այդ ձեզ շատ կօգնէ: Դուք, չահիլ, բարձր շրջանի օրիորդները, առհասարակ առողջ չէք լինում, բայց բժիշկը պարտաւոր է ազատել նրանցից մէկին, որին դեռ կարելի է փրկել: Այսպէս ես ձեզ առաջարկում եմ երկու ընտրութիւն՝ ունենալ պիծակի իրան, միշտ հագնել նեղ կորսէները և պոտինները, դեղնած, նիհար լինել և միշտ տկարանալ, թէ՞ ունենալ լայն իրան, առողջ մկաններ, կարմիր այտեր և շրթունքներ, ունենալ լաւ մարսողութիւն, լաւ տրամադրութիւն և զարձալի կեանք: Որն էք ընտրում:

—Ի հարկէ, ես կրնախադասեմ առողջ լինել,—պատասխանեց Էմիլիան.—գիւղում ինձ ոչ ոք չի տեսնիլ:

—Ի հարկէ,—աւելացրեց մայրը,—առաջ պէտք է առողջանալ, իսկ յետոյ կրտեսնենք ինչ ենք անելու:

Այս խօսակցութիւնից մի շաբաթ յետոյ, մինչդեռ գեղեցիկ կառքը, կանգնեց Պրիմրոզի պաստակերտի առաջ: Բայց Հիմա նա լցած էր զանազան բարձերով և մանր բաներով, որոնց անհրաժեշտ էին համարել տկար օրիորդի համար: Կառքի միջից հանեցին Էմիլիային և տարան նրա համար պատրաստած սենեակը:

Քանի որ տկարը ճանապարհորդութիւնից հանդստանում է, կաշխատենք բացատրել թէ ինչպէս Լաստենու թախանձանքով, Հին և սևացած պաստակերտի սենեակը դարձաւ մաքուր և հաճելի սենեակ, որ մինչև անդամ քաղաքացուհուն գեղեցիկ երևաց:

Լաստենին կամենում էր, որ խեղճ չահիլ աղջիկը իրանց մօտ լաւ լինի, ուստի և ամեն ձիգ թափում էր:

Երբ վճռեցաւ Էմիլիայի այդ պաստակերտը տեղափոխելը, Լաստենին համեցեց պառաւ ձիուն և վերցնելով իր հետ պատրաստած լուրը, դնաց քաղաք, ուր և վաճառեց լուրը լաւ դնով: Ստացած դումարով նա դնեց պաստառ, բարակ կալենկոր և կապոյտ երիզ:

Հետևեալ օրը, Լաստենին դիմեց օգնութեան իր եղբայրներից մէկին. նրանք միասին չափեցին, կտրեցին և պաստառները կպցրին. այդ գործը տևեց ամբողջ օր: Յետոյ եղբայրը

ԵԳԻՊՏԱՑԻ ԿԻՆ

շինեց փայտեր պատուհանների վարագոյրների համար: Լաստենին վերմակն էլ ընտրեց պաստառի համեմատ: Հին բազկաթոռը, որ անկիւնում ընկած էր, նոյնպէս նոր կտորով էր ծածկած: Լայն տախտակը դարձրին տուալետ—սեղանի, որի ոտները ծածկեցին կտորով: Կալենկորով ծածկուած կոճղը սեղանի տեղ էր ծառայում: Ամենայն տեղ, ուր կարելի էր, դրած էին ծառեր:

—Ինչպէս լաւ է այստեղ, բացականչեց Էմիլիան, տեսնելով սենեակը:

—Ես նրանից ոչինչ չեմ խնայելու—ասաց Լաստենին, մտնելով խոհանոց. կարծում եմ, թէ կարող եմ նրան օգնել:

XII.

Բժիշկ Հալտհակի պատուէրները վճռական էին. ոչ մայրը, ոչ մօրաքոյրերը և ոչ ծառան կարող էին գնալ Էմիլիայի հետ:

—Նա—ասաց բժիշկը—պէտք է մոռանայ անցեալ կեանքը և սկսէ նոր կեանք: Միայն այս պայմանով կարելի է յուսալ թէ նա կ'առողջանայ:

Էմիլիայի եկած հետևեալ օրը, առաւօտեան հինգ ժամին զարթնեցրեց նրան մի անսովոր աղմուկ: Այդ մշակներն էին, որ պաստաղերտում ման էին գալիս:

Քանի որ խոհանոցում ուրախ նախաճաշիկ էր, զարթնեցին տնային կենդանիները և շուտով նրանց ձայները միաւորուեցին մէկ ամբողջ խմբի հետ:

Այս ձայներն ու աղմուկը բոլորովին չէին նմանում քաղաքային աղմուկին, նրանք Էմիլիայի ջղերի վրայ մեղմ կերպով էին ազդում: Նրա աչքերն սկսեցին փակուել: Ձայները աստիճանաբար թուլանում էին և վերջապէս բոլորովին դադարեցին: Երբ Էմիլիան արթնացաւ, արևն արդէն պայծառ լուսատորում էր սենեակը: Նրա քնած ժամանակ մէկը սենեակ ներս մտաւ, որովհետև անկողնու մօտ դրած սեղանի վրայ անձեռոց էր ձգած: Այստեղ էր մեծ բաժակը, ցօղից խոնաւացած գոնդակիկներով և ուրիշ ծաղիկներով:

—Ի՜նչպէս լաւ է—բացականչեց Էմիլիան:

—Ես շատ ուրախ եմ, որ կարողացայ ձեզ զարճացնել,—ասաց Էմիլիայի եւրից մի ձայն և անկողնուն մօտեցաւ Լաստենին:

—Դուք բերեցիք այս ծաղիկները—հարցրեց Էմիլիան:

—Այո՛, ես: Ես քաղեցի, քանի որ ցօղը չէր չորացել:

Ներանք այդ ժամանակ աւելի լաւ են: Գրանք մինչև երեկոյ կը թառամին:

—Ես այդ չըգիտէի:

—Այո, բայց ամենայն օր նորերն են ծաղկում: Ես հաշւում եմ վաթսունի չափ ծաղիկ իմ կաթնատան պատուհանի մօտ, որոնք մինչև իմ տերուհիք հաւաքելս՝ բացւում են:

—Ուրեմն՝ դուք շատ շուտ էք արթնանում:

—Թռչուններին հետ միասին—ուրախ պատասխանեց Լաստենին.—ես սիրում եմ առաւօտեան վաղ ժամերը, այն ժամանակ գործն էլ շուտ է առաջ դնում: Դուք, ի հարկէ, նոյնպէս շուտ կըզարթնէք:

Լաստենին բերաւ կոնք և երեսըրբիչ, օգնեց Էմիլիային հագնուել, լուացւել և յետոյ բազկաթոռը մօտեցրեց սեղանին:

—Նստեցէք նախաճաշելու—ասաց նա ուրախ—նախաճաշիկը պատրաստ է:

Լաստենին դուրս եկաւ և մէկ րոպէից յետոյ վերադարձաւ սկուտեղով, որի մէջ դրած էր նախաճաշիկը:

—Ի՜նչ լաւ նախաճաշիկ է—ասաց Էմիլիան:

Արդարև նախաճաշիկը լաւ էր. բաղկացած էր ելակներից, որը խաղողի տերևների վրայ էր դրած, սերից, նոր իւղից և բաղարջներից: Սրա վրայ աւելացրէք կանաչ բլուրների և ծառերի տեսարանը, որոնց վրայ դեռ փայլում էին ցօղի կաթիլները և դուք չէք զարմանալ, որ այս առաւօտ Էմիլիան կուշենար լաւ ախորժակ:

—Կերէք ինձ հետ,—ասաց նա Լաստենուն, վախենալով որ իրան ազահ կանուանէ:

—Չնորհակալ եմ, ես արդէն վաղուց է, նախաճաշել եմ:

—Ո՞ր ժամին էք դուք զարթնում:

—Ժամը չորսին:

—Ժամը չորսի՜ն,—կրկնեց Էմիլիան, հազիւ շնչելով,—այդ անհնարին է:

—Չէք հաւատում—ասաց Լաստենին ուրախ ծիծաղելով—բայց եթէ դուք իմանայիք ինչպէս այդ ժամանակ ամեն բան լաւ է—կանաչ, թարմ և անոթը:

—Գիտէք արդեօք—ասաց Էմիլիան,—լսելով այսօր առաւօտուայ ազմուկը, կարծեցի դեռ չէ լուսացել և մի որ և է անբախտութիւն է պատահել:

—Այդ ամեն առաւօտ կրկնւում է,—պատասխանեց Լաստենին,—յոյսով եմ որ ազմուկը ձեզ չի անհանգստացնիլ:

—Ամենևին, ես չեմայ երեք ժամ քնեցի: Ի՞նչ էք անում դուք, այդպէս շուտ զարթնելով:

—Ես շատ գործ ունեմ: Կերակրում եմ և կթում եմ կովին: Դուք կըտեսնէք նրան, նա շատ բարի և խելացի կով է: Մայրս ծիծաղում է իմ վրայ, տեսնելով որ ես աշխատում եմ լաւ կերակրել նրան: Նա հաւատացնում է, թէ ես կովի համար թխում եմ եղիպտացորենից շաքարով, ձուերով բաղարջներ: Ես այդ չեմ անում, բայց կովը միշտ սպասում է աւելի համեղ կերակուրների և այնպէս քնքոյշ է նայում վրաս, երբ ես նրան կերակրում եմ: Նայեցէք, ինչպէս նա լաւ կաթ է տալիս: Եկէք իմ համբարանոցը՝ աւազակի մօտ, նայեցէք կուժերով կաթին և սերին:

—Եւ դուք էք մակարդում իւղը:

—Ի հարկէ, ես ինքս եմ մակարդել և այդ, որ դուք ուտում էք:

—Ե՞րբ, այս առաւօտ:

—Ոչ, երէկ:

— Ոհ, ինչքան դուք գործ ունէք, ես ձեզ դժւարութիւն կը պատճառեմ: Ի դուր բժիշկը թոյլ չըտուց վերցնել հետս աղախին:

—Նա մեզ կըխանգարէր,—ասաց Լաստենկին—ես կարծում եմ, որ աւելի լաւ կըլինէր, եթէ թոյլ տայիք ձեր մասին ամեն հոգս տանել:

—Բայց դուք շատ գործ ունէք:

—Ոչ, այսօրւայ քիչ է մնում: Իւղը պատրաստ է, ճաշը նոյնպէս պատրաստ է և ուղարկած պաշտը, մշակները միայն երեկոյեան կըվերադառնան: Հիմա ես կարող եմ կարել, կարդալ, դրել, ամեն բան՝ ինչ որ կամենամ: Եւ եթէ դուք ցանկանաք, ես ձեզ ցոյց կըտամ մեր կալածքը:

Էմիլիան վերկացաւ և հաղնելով իր լայն գլխարկը, գնաց Լաստենու հետ: Նրանք առաջ գնացին Լաստենու համբարանոցը: Ընտեղ հոսող աւազակը զովութիւն էր տարածում: Պատերից մէկին մեխած էր լայն ասխտակ, կաթնի պոյթերը վրան:

—Ահա ես միշտ այստեղ եմ նստում—ասաց Լաստենկին, ցոյց տալով կապտա գլուղական նստարանը—մինչև անդամ ամեն օրթ եղանակներին, այստեղ զով է լինում:

Յետոյ Լաստենկին ցոյց տւեց Էմիլիային պոյթերը, որ գրել էր արևի տակ՝ չորանալու:

Էմիլիան ամեն բանով հետաքրքրւում էր, որովհետև ամեն ինչ նոր էր նրա համար: Նա ուրախ ձայնով ասաց.

—Կըցանկայի տեսնել, թէ ինչպէս է այս ամենը կատարւում, բայց դուք այնպէս շուտ էք գալիս, որ ես չեմ կարող զարթնել:

—Զատ սխորժելի է և ուրախալի տեսնել, թէ ինչպէս է բաժանւում լուլը կաթից և բարձրանում վերև,—պատասխանեց Լաստենին,—երբ ձեր այժերը կըվերանորոգւեն, դուք կարող էք շուտ զարթնել և տեսնել թէ ինչպէս է այդ ամենը լինում: Չէք կամենալ արդեօք, դնալ կատքով մանգալու, քանի որ շոգ չէ: Երբ ձին դաշտայինն դորձելի համար հարկաւոր չէ, նա իմ կարգադրութեան ներքոյ է լինում:

—Դուք ասացիք որ բոլոր մշակները դաշտում են, իսկ ո՞վ է ձիուն համեստում:

—Ես ինքս, ձին ինձ ճանաչում է: Ես կարծում եմ, որ նա ինքը կըլծւէր, եթէ կարողանար:

Այսպէս խօսելով Լաստենին, Էմիլիային բերեց մեծ և մաքուր համբարանոցը, որտեղ նախընթաց օրը խոտ էին բերել:

—Նստեցէք այստեղ—ասաց Լաստենին,—երբ կըհանդըստանաք, ես ձեզ կըտանեմ իմ սիրած տեղը, որ վերևումն է:

—Մի՞թէ ես կարող եմ բարձրանալ սանդուղքով, շունչս կը կորչի:

—Ո՛հ, մի վախենաք, մենք ուրիշ կերպ կանենք: Թոյլ տուեցէք ձեր գօտիից բռնել: Վերկացէք:

Եւ երբ Էմիլիան սթափւեց, Լաստենին բարձրացրեց նրան և դրեց անուշ խոտի վրայ և ասաց՝

—Դուք չըդիտէիք ինչպէս հեշտ է սանդուղքով բարձրանալը:

—Ո՛չ—պատասխանեց Էմիլիան,—ինչ դեղեցիկ տեղ է և ինչպէս խոտը լաւ հոտ ունի:

—Հիմա—ասաց Լաստենին—ես ձեզ կըտանեմ իմ առանձնասենեակս և կըհատացնեմ բաղմոցի վրայ:

Այնտեղ՝ ուր նստած էին ջահիլ օրիորդները, գտնւում էր մի մեծ պատուհան, որի միջից խոտ էին ներս ձգում: Լաստենին քաղաքացուհուն նստացրեց այդ պատուհանի դէմ, մի դէզ խոտի վրայ:

—Դքսուհին ձեզ կընախանձէր,—ասաց նա—նայեցէք ինչ հիանալի տեսարան է, ամբողջ հովիտն երևում է և բոլոր կապոյտ սարերը կարելի է հաշւել, որոնց վրայ երբեմն ամպերը ստւեր են ձգում: Այստեղ ես ամբողջ ժամերով ընթերցանութեամբ և ձեռագործութեամբ են պարապում: Եթէ կամենաք՝ մենք միասին կարող ենք գալ այստեղ:

Կարդալ Էմիլիան չէր սիրում, կարել բոլորովին չդիտէր։ Ուստի չըցանկանալով ուղղակի Լաստենուն պատասխանել, նա խնդրեց որ ցոյց տայ իր գրքերը։ Ի միջի այլոց կային և երկու ֆրանսերէն գրքեր։

—Դուք գիտէ՞ք ֆրանսերէն կարդալ,—զարմանալով հարցրեց Էմիլիան։

—Գիտեմ, բայց վատ եմ արտասանում բառերը, ես բոլորովին չեմ լսել ֆրանսերէն մաքուր արտասանութիւն։ Կարելի՞ է դուք ուղղչանալով, ինձ հետ կրպատրաստէք։

Էմիլիան կարմրեց։ Նա յիշեց իր նախկին ծուլութիւնը, բայց այնուամենայնիւ պատասխանեց.

—Ես երբէք չեմ սիրել այդ լեզուն, բայց և այնպէս ինձ ասում էին, որ լաւ եմ արտասանում, այդ զարմանալի չէ, որովհետև ես երկար եմ եղել ֆրանսիացիների սանսիօնում։

—Եւ դուք ինձ հետ ամեն օր կրպատրաստէ՞ք.—հարցրեց Լաստենին։

—Դուք այնպէս բարի էք վարուում, պատասխանեց Էմիլիան —որ ես ուրախութեամբ կրկատարեմ ձեզ համար մի որ և է բան։

—Ձատ դեղեցիկ—բացականչեց ուրախութիւնից Լաստենին—մենք այստեղ կրբերենք գրքերը, այստեղ գով է և ոչ ոք մեզ չի խանգարիլ։ Ես ձեզ համար կրկարդամ—աւելացրեց նա կարմրելով—եթէ դուք միայն թոյլ կրտաք։

—Դուք շատ բարի էք և ինձ մեծ զարմանք կրպատճառէք—պատասխանէք Էմիլիան։

—Հիմա եթէ կամենում էք կառքով դնալ, ես կրկանչեմ ձիուն։

—Դուք այդ ճշմարիտ է՞ք ասում։

—Այո՛, ճշմարիտ։

Եւ մի քանի վայրկեանից ձին հնազանդելով Լաստենու ձայնին, դուրս եկաւ սիսուատնից, մօտեցաւ իր երիտասարդ տիկնոջը, թեքեց գլուխը մինչև որ նա լուծը կրհագցնէր։ Այդպիսի դիջումով թոյլ տւեց և համետելու սայլակից. սրա վրայ Էմիլիան շատ զարմացաւ, որ յատակի ճեղքերից ամեն դորճողութիւն ուշադրութեամբ էր դիտում։

Մի քանի րոպէից Լաստենին նրա մօտ էր։

—Թոյլ տւէք տանելու ձեզ ներքև.—ասաց նա։

—Ինչպէս տանել—ծիծաղելով ասաց Էմիլիան։

—Ոչ, դուք դիտէք որ յաղնելը ձեզ վնաս է։ Մարդս ասաց ինձ, որ ես ձեզ պահպանեմ չրմոռանալով ձեր թուլութիւնը։

—Ես կըմտածեմ ինքս գնալ, ես չեմ վախենում, և ինչպէս որ՝ կարող եմ առնուազնքից իջնել:

—Այո, ի հարկէ, և վայր չէք ընկնիլ:

Էմիլիան իր ամբողջ կեանքի ընթացքում, մի այսպիսի քաջութիւն չէր ալել և բաւականութիւն զգաց այդ յաղթութիւնից յետոյ: Լաստենու զոլծունեայ, վաստակաւոր կեանքը, իր բոլոր զեղեցկութեամբ, շատ դիւր եկաւ Էմիլիային և նա տեսաւ որ այդ կեանքն աւելի բարձր է այն հիւանդոտ և անզործ կեանքից, որ նա մինչև այն տանում էր:

Առաւօտեան գրօսանքը հիանալի էր: Ամենից առաջ կանգնեցին ջրաղացի մօտ, այստեղ Լաստենին թողեց ցոլենի հատիկներով լի պարկը: Էմիլիան այդտեղ առաջին անգամ տեսաւ ինչպէս հատիկը գառնում է ալիւր: Նա նայում էր փրփրած ջրին, որը թափւում էր ջրաղացի սևացած, դանդաղ պտտող անիւի վրայ: Նա նայում էր թէ ինչպէս մեծ երկանաքարերը հատիկները հիանալի ալիւր էին դարձնում: Արդէն ճանապարհին Էմիլիան նկատեց, որ Լաստենուն բոլորն էլ սիրում էին: Երևում էր որ ամեն անցնող մեղմ ժպտում էր և քաղցր խօսքեր գտնում նրան ասելու: Երբ նրանք եկան ջրաղացը, նրանց հանդիպեց բարի ծպիտով ջաղացպանը, որ ուրախ ասաց՝

—Ա՜, այդ դու ես, Լաստենի, շատ ուրախ եմ, որ քեզ տեսայ:

Յետ գառնալու ժամանակ, Լաստենին բոլորին էլ, որոնք ապրում էին ջրաղացում, հարց ու փորձ էր անում, նրանց առողջութեան և զործի մասին:

Էմիլիայի համար աննկատելի անցաւ օրը, նա հիմա միայն լմացաւ թէ ինչ է կեանքը: Նա շատ լաւ ընթերեց, մտաւ անկողին և խոյն քնեց:

ՕՐ. ԵՂԻՍԱԲԷԹ ՆԱԽՍԻՊԵԱՆ

(Վերջը միւս անգամ)



ՋԻԱՐՃԱԼԻՔ

ԽՄՆԻԹՊԱՆԸ ԵՒ ԱՍՏՑՈՒԸ

Պետրոսենց Աստուրը իրանց դիւղից ճանապարհ է ընկնում ձիով գնալ Ա. քաղաքը:

Աստուրը ճանապարհին վեր է գալիս մի խանութպանի մօտ: Նա խնդրում է որ իր ձիուն դամը տանեն, գարի ուտացնեն և յետոյ հաշիւը ներկայացնեն:

Ձիուն ուտացնում, կշտացնում են:

Մի փոքր ժամանակից յետոյ՝ Աստուրը պատրաստւում է ճանապարհ ընկնելու, գնում է խանութպանի մօտ՝ հաշիւը վերջացնում ու ձին խնդրում:

—Ի՞նչ ձի, ինչ բան, ինչեր ես ասում, դու ոտով ես եկել, խելքդ գլուխդ հաւաքի, թէ չէ... ասում է խանութպանը:

—Ես ձեզ ասում եմ՝ ձիս բերէք, եթէ ոչ այն կանեմ, ինչ որ իմ հայրս է արել:

—Ես էլ քեզ ասում եմ որ դու ոտով ես եկել, քո հաշիւդ մէջ՝ շատ սխալ ես, կրկին ասում է խանութպանը:

—Ասում եմ ձիս բերէք, եթէ ոչ այն կանեմ, ինչ իմ հայրս է արել, կրկնում է նա:

Խանութպանը կրկին որ այս լսում է՝ իսկոյն ձին բերում է, վախենալով մի դուշէ սպանի կամ բանտարկել տայ, և յետոյ հարցնում է.

—Քո հայրը ինչ է արել:

Աստուրը պատասխանում է՝

—Մի օր իմ հօրս էլ, այդպիսի մի բան է պատահել և նա ճարահատեալ իր խուրջինը վերցրել էր ուսը գցել ու այնպէս ոտով ճանապարհ ընկել:

ՀՈՐԻԿ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

21) Առաջ. Գ. Բաբուրեանցի.

Մի զաւառ կայ Կովկասում,
Պատմութեան մէջ շատ գոված.
Այդ գովքը մինչև հիմա
Դեռ ևս չէ մոռացած:
Այդ զաւառի զովասանքը
Կայանում է նրա մէջ,
Որ այդ երկրի մարդիկը՝
Քաջ էին—երգելու մէջ:
Հանելուկիս շուտ լուծելը
Հեշտացնելու ձեզ համար՝
Յանձն կառնեմ նրա կիսելը,
Որ չի տևի շատ երկար:
Ուզած բառս երկու վանկ է,
—Առաջինը՝ ոչ ցանկալի,
Միւս վանկը—ուտելիք է,
Որը թթու համ ունի:

—

22) Առաջ. Գ. Բալասեանցի.

Մի բառ գիտեմ երկվանկանի,
Հինգ տառերից է բաղկացած,
Նա զորձիք է մի այնպիսի,
Որ շատին է սնունդ տւած,
«Որով կապրի և շունչ կառնի
Ամեն անդամ մարդկութեան».
Նրան տեսնել դուք կարող էք
Ամեն դիւղացու դրան:
Վերջին վանկը եթէ կարդաք,
Դուք ուտելու բան կըստանաք,
Մի բան սիրած դեղջկուհիի,
Երբ խնոցի նա կըհարի:
Իսկ թէ վերջին այդ վանկիցը
Պոկէք մի տառ սկզբիցը,

Եւ միացնէք միւս առաջին
Վանկի հետը՝ երկու տաւին—
Այն ժամանակ դուք կըստանաք
Արտայայտիչ մի զգացման,
Փոխարինել որին երկրում
Անկարող է և ոչ մի բան։
Թէ կենդանու, թէ մարդու մէջ
Այդ զգացումը առհասարակ
Նկատւում է յաճախ անվերջ,
Չունի սահման և ոչ յատակ։
Նամանաւանդ մեծ է լինում
Այդ զգացումն բարերեր
Այն մայրենի վեհ սրտերում,
Որոնք ունեն զաւակներ...

—

23) Առաջ. Գ. Բաբ.

Գտնւում եմ խոր տեղերում,
Ոտներ չունեմ՝ վազում եմ.
Թարս կարդացէք անունս՝
Ինսեկտումն է իմ բունս։

Բ Ա Ռ Ա Խ Ա Ղ

Դու սիրում ես միշտ վայէլ,
Եղբայր, այդ քեզ չի վայել։

—

Տկից գինի շատ է կաթել,
Ծայրը կապիր՝ թէ որ կայ թել։

—

Եկայ ձեր տուն վազէ վազ,
Ձանրին գտայ կանաչ վազ։

—

Հարուստ լինել ես երազում,
—Այդ կըտեսնես դու երազում։

—

Լսէք բարի խօսքերս մի քանի
Եւ այսուհետ չարութիւն մէջ անի։

—

Ես տեսայ՝ մի խոր ու մութ այրում՝
Կենդանի մարդ էին այրում։

—

Ես մեռայ օդնեցէ՛ք, ամէն,
Ինձ խմացրին թոյն՝ մի աման։

—

Տէր, չոքած պատկերիդ առաջին,
Խնդրում եմ՝ ընկալ՝ խնդիրքս առաջին։

Գ. ԲԱՐՈՒՐԵԱՆՑ

---

24) ՍՐԱՄԻՏ ԽՆԴԻՐ



Պիտի ապացուցանել որ 8×8=65-ի։

Դնենք ABCD քառակուսին և ամեն մէկ կողմը ութը հաւասար մասի բաժանենք ու զուգահեռականաբար իրարու հետ միացնելով կունենանք 64 հատ փոքր քառակուսիներ։ AB և CD գծի վրայ գտնուող M,N-ը իրարու միացնենք գծով։ Այն ժամանակ կունենանք MBND փոքր ուղղանկիւնը, որ իր մէջ պարունակում է 24 հատ քառակուսիներ և AMCN մեծ ուղղանկիւնը, որ իր մէջ պարունակում է 40 քառակուսիներ։

MBND ուղղանկեան B-ն N-ի հետ միացնենք գծով, ուր կունենանք 2 հատ հաւասար եռանկիւնները, որ իւրաքանչիւրը իր մէջ պարունակում է 12 քառակուսիներ։

Իսկ AMCN ուղղանկեան L-ը P ին միացնենք, կունենանք երկու հատ իրարու հաւասար տրապիզներ (trapéze), որ իւրաքանչիւրը պարունակում է 20 հատ քառակուսիներ։

Տեսանք որ ունենք երկու հատ եռանկիւններ, որ իւրաքանչիւրը պարունակում է 12 քառակուսիներ և երկու հատ տրապեզներ, որ իւրաքանչիւրը իր մէջ 20 քառակուսիներ ունի։

Ուստի այս կտորները առանց իրանց չափը փոխելու զետեղել այնպիսի մէկ ուղղանկեան մէջ, որ իր մէջը պարունակի 65 քառակուսիներ, և այս իւրաքանչիւր քառակուսին հաւասար լինի ABCD քառակուսի մէջ եղող իւրաքանչիւր քառակուսուն։

Այսինքն՝ եթէ 64 հատ քառակուսի պարունակող այս չորս կտորները զետեղէք 65 քառակուսի պարունակող չորս կտորներու մէջ, որոնք իրանց չափերը միշտ միևնոյնն են պահում, այն ժամանակ ապացուցած կըլինենք որ 8×8=65-ի։

Կ. Պոլիս ԱՐՇԱԿ ՉԼԹԵԱՆՑ

ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՀՆԱԶԱՆԴԵԼ ՍՈՎՈՐԵՑՆԵԼԸ

Ոչ միայն ընտանիքում ու դպրոցում, այլև կեանքում հնազանդելը ամենագլխաւոր առաքինութիւններից մէկն է։ Ոչ մի կրթութիւն առանց հնազանդութեան միտք չունի։ Սա ոչ թէ պարապուկս, այլ մի անհերքելի ճշմարտութիւն է, որը դժբախտաբար շատերը դեռ ևս չեն խոստովանում։ Ծնողների մեծամասնութիւնը այդ ճշմարտութիւնը հասկանում է միայն այն ժամանակ, երբ երեխաների անհնազանդութիւնը իրանց հանգստութիւն չի տալիս։

Փոքրիկ ծառի՝ ուղղելուն կարելի է նպաստել, երբ նա ճկուն է, իսկ երբ նրա բունը ծռել և ամրացել է, այն ժամանակ ոչ մի մարդկային ոյժ չի կարող նրան ուղղել. նոյն իսկ ամենասաստիկ փոթորիկը չի կռացնիլ նրան, այլ միայն կըկոտրի կամ արմատախիլ կանի։ Այդ իւրաքանչիւրը հասկանում է։ Իսկ միևնոյն ժամանակ շատ քչերի մտքովն է անցնում, որ երեխան միևնոյն ծառն է, որի կանոնաւոր զարգացումը կախւած է նրան կարելոյն չափ շուտ հսկելուց։

Որդեսէր հայրեր և մայրեր, ձեզանից ոմն յայտնի չէ, թէ քանի, հէնց նոր հասարակական կեանքը դուրս եկող երիտասարդներ, կորչում են միայն նրանից, որ չեն սովորել ենթարկւել բարձրագոյն կամքի, որ նրանք երկար ժամանակ չեն կարողանում յարմարւել տիրապետող հասարակական կարգերին, չեն ենթարկւում օրէնքներին։ Ուստի ձեր երեխաներին հնազանդել սովորացրէք, քանի որ նրանց կամքը թոյլ է, քանի որ նրանք պիւրութեամբ կը հնազանդւեն։

Այս խորհուրդը տալով միևնոյն ժամանակ ես աւելորդ չեմ համարում նկատել, որ մի քանի ծնողներ, մանաւանդ մայրեր, հնազանդութեան մասին բաւականին տարօրինակ հասկացողութիւն ունեն։ «Երեխաներին հնազանդութիւն տեսնելում, ասում է այդպիսի մայրը,—սկզբ է նրանց բնաւորութիւնը ճանաչել և նրանց հետ յարմարւել։ Այսպէս, օրինակ, իմ Գրիգորը միշտ հնազանդ է, երբ նրա հետ քաղցրութեամբ են վարւում, խնդրում են և խոհեմութեամբ համոզում են. իսկ խստութեամբ, պատիժներով և սպառնալիքներով նրանից ոչինչ չի կարելի սպասել։ Այդ դիմացկունութիւնը նրան բնութիւնն է տւել»։

Չեզ, երևի, քիչ չի պատահել նոյնանման ֆրազներ լսել։ Ֆրազներ, որովհետև իսկապէս երեխայի բնական դիմացկութիւնը երևում է նրա մայրիկի թոյլ բնաւորութեան շնորհիւ զարգացած յամառութեամբ։ Երեխան հակառակում է մօր ամեն

մի հրամանին, եթէ նոյն իսկ նա պատիժ է սպառնում, որովհետև փորձով գիտէ, որ նա այդ սպառնալիքը չի կատարիլ։ Իսկ ինչ վերաբերում է այն գովելի յատկութեանը, որին մայրը հնազանդել է անւանում, նա առաջ է գալիս ոչ թէ մօր խնդրից կամ խրատից, այլ բոլորովին ուրիշ բանից, ինչպէս պա երևում է հետևեալ տեսարանից։

Տիկ. N հրաւիրել էր իրան մօտ իր մի ծանօթ մանկավարժին մեծ որդու մասին խորհրդակցելու համար։ Բայց որովհետև այն ժամանակ, երբ նա հիւրին ընդունում էր, դահլիճում դտնւում էր նրա փոքր որդին, մայրն ասաց.

—Գրիգոր, այժմ գնա այգին եղբայրներիդ և քոյրերիդ մօտ։

—Ինչու՞։

—Ես պէտք է ուսուցչի հետ խօսեմ, իսկ դու մեզ քո խաղովը կըխանգարես։

—Ոչ, ես հանդիստ կընստեմ և կըլսեմ։

—Այդ քեզ չի վերաբերում. լսիր ինձ և գնա այգին։

—Չեմ կամենում։

—Ա՛յ, Գրիգոր, Գրիգոր, չէ՞ որ դու գիտես, որ երեխաները պէտք է լսեն մեծերին։

—Բայց ես չեմ կամենում։

—Է՛, ինչ կըմտածի քո մասին ուսուցիչդ. լսիր ինձ և գնա այգին։

—Չեմ գնում։

—Եթէ դու լսես ինձ, յետոյ ես քեզ կանիֆէտ կըտամ։

—Ես կանիֆէտ չեմ ուզում։ Այլ դու ինձ հինդ կոպէկ տուր մոռ դնելու։

—Թող, Գրիգոր, չէ որ դու նախաճաշի ժամանակ մի ամբողջ ափսէ մոռ կերար։ Իսկ եթէ դարձեալ ուտես, այն ժամանակ կըհիւանդանաս։

—Ի, եթէ հինդ կոպէկը չըտաս, չեմ դնայ։

—Գրիգոր, Գրիգոր։

—Իսկ դու տուր ինձ հինդ կոպէկը։

—Է՛, քեզ հետ ուրիշ կերպ չի կարելի։ Ահա քեզ հինգ կոպէկ, դէ գնայ։ Աստաձ քեզ հետ։ (Դառնալով հիւրին)։ Զարմանալի տոկունութիւն կայ այս երեխայի մէջ։ Դեռ լաւ է, որ ես կարողանում եմ նրա հետ վարուել։

Իսկ իսկապէս Գրիգորը կարողանում էր մօր հետ վարուել աւելի լաւ, այսինքն աւելի ճարպիկութեամբ, քան մայրը նրա հետ։ Թուլէ դուք ինձ կասէք, թէ առաջ բերած օրինակը եթէ հէնց կեանքից էլ է վերցրած կամ իրականութեան մի պատկեր է ներկայացնում, կամ թէ չէ մի բացառիկ դէպք է։ «Մեր տանը—կասէք—դրա նման ոչինչ չի պատահում»։ Ընդմանեն ք այն փարիսեցուն, որն ասաց. «Տէր, շնորհակալ եմ Քեզնից, որ ես ուրիշ մարդկանց նման չեմ»։ Անհնազանդութեան դէպքեր պատահում են և ձեր երեխաների մէջ։ Եթէ ձեր որդին տողը գրեց վերջացրեց, նախ քան ձեր կանչելով գալը, նա արդէն անհնազանդ է. եթէ ձեր աղջիկը ստիպեց հրամանը կըրկնել նախ քան կատարելը, նա էլ անհնազանդ է։

—Չա՛,—կըպատասխանէք դուք, —փոքրիկ սխալանքներ իմ երեխա-

ների հետ էլ են պատահում։ Բայց դրանք դատարկ բաներ են, որոնց վրայ չարժէ ուշադրութիւն դարձնել։

Այդ մի ասէք։ Անհնազանդութեան դէպքերը, որքան էլ նրանք աննշան լինէին, նրանց անտեսանելուց, կարող են յաճախ կրկնուել և ուժեղանալ ձեզ համար բոլորովին աննկատելի կերպով։ Ձեզ երկար հակառակելու համար ձեր երեխաները դեռ շատ թույլ են։ Նրանց կարելի է համեմատել մի զօրագնդի հետ, որ թշնամու դէմ յաջողութեամբ հակառակելու համար հարկաւոր ոյժը չունի, ուստի հէնց առաջին յարձակման ժամանակը անձնատուր է լինում։ Իսկ մեւսները կարող են երեք կամ չորս յարձակումներ տանել և յետոյ զինաթափ լինել, բայց ոչ անպայմանն, այլ կապիտուլեացիայով, քանի թէ շատ ճեռնտու պայմաններով։ Վերջապէս երրորդները այնքան ուժեղ են, որ ոչ միայն չեն լսոնարհւում, այլ կռւի դաշտումը յաղթող են մնում և վախցնում են այն բոլորին, որոնք չանգղնում են նրանց անկախութիւնը և ինքնուրոյնութիւնը ճնշել։

—Բայց պարզ չի արդեօք այս տեղից—կասէք դուք նորից,—որ անհնազանդութիւնը մի ինչոր բոլորովին անբնական բան է, որ բողխում է երեխայի կամքը արտայայտելու ձգտումից, որ դրել է նրա մէջ բնութիւնը։ Միանգամայն ուղիղ է։ Անհնազանդութիւնը ինքն ըստ ինքեան ոչ մի վատ բան, ոչ մի չարիք չի պարունակում իրան մէջ. բայց ինչպէս կրթութեան ժամանակ, նոյնպէս և կեանքումը մենք առանց հնազանդութեան չենք կարող ապրել, ուստի պէտք է այդ երեխաներին սովորեցնել, որքան էլ դժւար լինէր։

(Կըշարունակւի)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անմեղ Արուսեակը (պատկեր)։ Լուսաձագին (ոտանաւոր).—Արշակ Մատոյեանց։ Լաւ միտք.—Ֆրանս. փոխադր. օր. Սեմալ։ Ամպ (ոտանաւոր)—Պ. Մոճուեանց։ Ստրուկներ (շարունակութիւն)—Յար. Թումանեանց։ Տատիկը.—Ա՛, չարաճճի շնիկ, լսելօք կաց... (պատկեր)։ Մեր Գուղը—օսմանեան աւանդութիւն.—Թարգմ. Կ. Մարտիրոսեանց։ Արծիւները որսում են նապաստակ (պատկեր), Դաշտային եւ ջրմանոցի ծաղիկ—մանկավարժական վէպ, Ֆ. Ստօու.—օր. Եղ. Նալսպէեան։ Եգիպտացի կին (պատկեր)։ Փղի որսը Հնդկաստանում (պատկեր)։

ՋԻԱՐԱԼԻՔ

Խանութպանը և Ասատուրը.—Լորիկ։ Հանելուկներ։ Բառախաղ։ Սրամիտ խնդիր—Ա. Ալպեանց։

Ֆ. ՖԱԺԻՆ

Երեխաներին հնազանդել սովորեցնելը (կըշարունակւի)

Խմբագիր-Հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ՍՏԱՅԻԼ Ը

ՁԵՆԱՊԱԿՈՒ ՎՐԱՅ ՊԱՏՐԱՍՏԱԾ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ

ՄԵԾԱԴԻՐ ՊԱՏԿԵՐԸ

ԳԻՆԸ 5 Ր. ՁԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ 6 Ր. ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 10 Ր.

Ազբիւբ-Տարագի և Պշակի բաժանորդները ճանապարհածախս չեն վճարում։

Պատրաստում է նոյն ձևով և

ՍՐԲԱԶԱՆ ՄԱՏԹԻՈՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ

ՊԱՏԿԵՐԸ

ԳԻՆԸ 5 Ր.

Նկանք, որոնք մինչդամիկ կրկոմենան վեհափառ Կաթողիկոսի, Սրբազան Պատրիարքի և Գրիգոր Արծրունու պատկերները, կարող են ստանալ և Գլաստոնի վաքրագիր ճնոտապակաւ վրայ պատկերը՝ 1 ր. վճարելով։

Արծրունու պատկերներից ի ցոյց են դրած Ազբիւբ-Տարագի խմբագրութեան մէջ։ Պշակի բաժանորդները պէտք է ուզարկեն կամ իրանց ազգրուած հասցէն և կամ թէ պահանջեն Պշակի խմբագրութեան միջոցով։

Պատկերները դրած են կրկնակի արկղներում և ուղարկուում են պահանջողներին հերթով, սկսած օգոստոսի մէկից։